ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 1, խմբագրական խորհուրդ՝ Ռ.Սաֆրասյան (պատասխանատու խմբագիր), Ս.Բաղդասարյան, Ա.Սողոմոնյան, Ե., «Զանգակ-97» հրատ., 2002, 104 էջ:

Այսօր ուրախությամբ կարելի է արձանագրել, որ հայ թուրքագիտությունն ունի ծանրակշիռ նվաճումներ և գիտական ավանդույթներ: Անցյալ տարի դրանց ավելացավ ևս մեկը: Արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժնի ջանքերով լույս տեսավ «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» հոդվածների գիտական ժողովածուի առաջին հատորը: Այդ շահեկան գործում հատկապես մեծ է ինստիտուտի թուրքագիտության բաժնի վարիչ Ռուբեն Սաֆրասյանի դերը: Արժե ընդգծել, որ ժողովածուն այսպիսի մոտեցումով և հարցադրումով նորույթ է մեզանում, և հույս ենք հայտնում, որ այն հետագայում կդառնա բարի ավանդույթ:

Մեր օրերում, երբ Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են բարդ, երբ ընթանում է նրա հետ քաղաքականության ռազմավարական մշակումների դժվարին գործընթաց, ցանկալի է, որ այսպիսի ժողովածուն ոչ միայն դառնա թուրքագիտական ուսումնասիրությունների տարեգիրք, այլև վերածվի գիտական հանդեսի և տարեկան լույս տեսնի գոնե երեք անգամ՝ ավելի ընդգրկուն ծավալներով: Անշուշտ, դա դժվարին,բայց և լուծելի խնդիր է թվում, քանի որ թուրքագիտությամբ զբաղվող հետազոտողների թիվը տարեցտարի ավելանում է, որը կունենա որակական արդյունքներ:

Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտությունների այս անդրանիկ ժողովածուն ունի ռուսերեն և անգլերեն ցանկեր և չնայած իր փոքրածավալությանը՝ բավական հարուստ բովանդակություն և արժեքավոր գիտական նոր նյութեր: Դրանք ունեն երկու բաժին: Մեկը նվիրված է էթնոքաղաքականությանը, որում կա երեք հոդված: Դրանցից առաջինը (Հեղ. Արսեն Ավագյան) նվիրված է գիտական այժմեական նշանակության կարևոր հիմնախնդրի՝ 1858-1874թթ. հյուսիս-կովկասյան մահմեդական ցեղերի զանգվածային վերաբնակեցմանը Օսմանյան կայսրությունում: Տվյալ դեպքում հեղինակի հարցադրումը վերաբերում է միայն վերաբնակեցման գործընթացին և գաղթածների քանակին:Հարուստ փաստական նյութերի հիման վրա, որոնց մի զգալի մասն առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում, հեղինակը եզրակացնում է, որ վերոհիշյալ ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասից Օսմանյան կայսրությունում վերաբնակեցվել է 1-ից մինչև 1,5 միլիոն մարդ: Այս եզրակացությունը մեծ մասամբ համահունչ է պատմագրության մեջ եղած տեսակետների մեծ մասին: Թեև հեղինակն իր առջև խնդիր չի դնում, ցանկալի կլիներ, որ գոնե հպանցիկ տրվեր հյուսիս-կովկասյան ժողովուրդների (և ոչ թե ցեղերի) վերաբնակեցման գիտաքաղաքական գնահատականը: Սա շատ էական ենք համարում, քանի որ օսմանյան կառավարության համանման, ավելի վայրագ հնարքներով քաղաքականությունը Աշոտ Մելքոնյանն իր հոդվածում («Օսմանյան կառավարության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների») իրավացիորեն որակում է որպես ցեղասպանություն: Այս հոդվածի արժեքավոր կողմը, թվում է, հարցադրումն է և երևույթի օրինաչափության ընդգծումը պատմական հսկայական ժամանակահատվածում՝ XV դ. մինչև XX դ. սկիզբը: Համոզիչ փաստերով ցույց են

տրվում հայերի ոչնչացման դրսևորումները դարերի ընթացքում, որոնց թվին են պատկանում բռնի մահմեդականացումը, հայկական բնակավայրերի ոչնչացումը, նրանց հողերում այլ մահմեդական ազգերի բնակեցումը և, վերջապես, ֆիզիկական ոչնչացումը: Հեղինակն այս գործընթացով է բացատրում հայ ազգային-ազատագրական շարժումների անհաջողությունը, որն, անշուշտ, համոզիչ է թվում:

Ժողովածուի առաջին բաժնի երրորդ հոդվածի հեղինակը երիտասարդ հետազոտող Հովակիմ Բոյաջյանն է («Թուրքական իշխանությունների վերաբերմունքը Պողոս Նուբարի գործունեությանը առաջին աշխարհամարտի նախօրյակին»): Բերված նյութերը մի անգամ ևս ցույց են տալիս օսմանյան կառավարության թշնամանքը արևմտահայության նկատմամբ և այդ իրավիճակում Պողոս Նուբարի հերոսական գործունեությունը:

Ժողովածուի երկրորդ բաժինն ունի «Քաղաքականություն և աշխարհաքաղաքականություն» խորագիրը: Այս մասի հոդվածները ևս աչքի են ընկնում հետաքրքիր հարցադրումներով և թարմ, գիտական շրջանառության մեջ դրվող նոր նյութերով: Ակնհայտ է հոդվածների քաղաքագիտական ուղղվածությունը, որը մեր արևելագիտության, մասնավորապես թուրքագիտության մեջ ինքնին հաճելի նորույթ է:

Կարևոր ենք համարում Վահե Գևորգյանի հոդվածում («Թուրքական գործոնը խաչակրաց շարժման ձևավորման մեջ») առկա տեսակետը միջնադարյան Արևմուտքի և Արևելքի բախման մասին: Գաղտնիք չէ, որ խաչակրաց արշավանքների բացատրությունը պատմագիտության մեջ միշտ վեճերի առարկա է եղել: Նույնիսկ ընթերցող լայն շրջանակներին մատչելի գրականության և դասագրքերի մեջ դրանք ավելի շատ բացատրվում են եվրոպական ավատատիրության ներքին հիմնախնդիրներով: Տվյալ դեպքում հեղինակն իրավացիորեն գլխավորը համարում է արևմտյան պատմագրության մեջ գերիշխող «քաղաքակրթությունների ճակատագրական բախման» տեսակետը և փորձում է վերհանել թուրքական գործոնի դերը այդ հիմնախնդրում: Կարծում ենք, որ այս ճիշտ ելակետով հեղինակի հետագա ուսումնասիրությունները կարող են տալ ավելի շատ արդյունքներ:

Ճանաչողական առանձնահատուկ նշանակություն ունի Աշոտ Սողոմոնյանի՝ Թուրքական պատմական ընկերության 1930-1948թթ. գործունեությունը լուսաբանող հոդվածը: Այստեղ ընդրկված նյութերը մեկ անգամ ևս ընթերցողին բերում են այն համոզման, որ թուրքական պատմագրությունը, հատկապես վերոհիշյալ ժամանակաշրջանում, ոչ մի ընդհանուր բան չունի պատմագիտության հետ: Թվում է՝ հեղինակը ճիշտ է վարվում, երբ թուրք պատմաբանների «ուսումնասիրություններ» հասկացությունը չակերտավորում է: Սակայն ցանկալի կլիներ, որ հեղինակը մի նույնպիսի հոդված նվիրեր նույն ընկերության գործունեությանը հաջորդ տասնամյակներում:

Եթե փորձենք ընդգծել հայ թուրքագիտության գլխավոր խնդիրը, ապա առաջնահերթ ենք համարում Թուրքիայի նորագույն շրջանի հիմնախնդիրների ուսումնասիրումը: Այդ առումով շատ ենք արժեքավորում Հայկ Դեմոյանի, Սուրեն Բաղդասարյանի և Ռուբեն Սաֆրաստյանի հոդվածները:

Հ.Դեմոյանի հոդվածի [«Հետամնաց արևելյան վիլայեթների զարգացման և «Հարավարևելյան անատոլիական նախագծի»(ՀԱԱՆ) շուրջ»] կապակցությամբ կցանկանայինք մատնանշել, որ այդ «Հետամնաց արևելյան վիլայեթներ» հասկացությունը,որն ընդգրկում է, հեղինակի ասելով, 290,7 հազ. քառ. կմ, մեծավ մասամբ համազոր է «Արևմտյան Հայաստան» հասկացությանը: Եվ ավելորդ չէր լինի մի անգամ ևս ընդգծել, որ խոսքը մեր պատմական հայրենիքի արմատական յուրացման մասին է:

Կարելի է վստահորեն ասել, որ ժողովածուի ամենահրատապ գիտական հիմնախնդիրներ արծարծող հոդվածներից մեկը («Ընտրության առաջ. Թուրքիայի քաղաքական զարգացման հիմնական գործոնների և գերակայությունների հիմնահարցը») պատկանում է Ս.Բաղդասարյանին: Մանրթանալով հեղինակի՝ Թուրքիայի քաղաքական զարգացման պատմական ընթացքի վերլուծությանը՝ ընթերցողի մեջ ակամա հարց է առաջանում,թե այդ բոլորը որքանո՞վ են ճակատագրական նրա հարևանների, մասնավորապես Հայաստանի համար: Ս.Բաղդասարյանի հմուտ վերլուծությունները ցույց են տալիս, որ ժողովուրդների համար «Թուրքական վտանգը»՝ որպես օսմանյան ժամանակներից մնացած տխուր ժառանգություն, շարունակում է գոյություն ունենալ: Արևմուտքի քաղաքակրթության զարգացման ուղիով ընթացող Թուրքերի հաջողություններն այսօր առավել քան համեստ են: Դրա փոխարեն առաջնային են մնում ազգայնամոլական տրամադրությունները: Դա են ապացուցում օսմանյան պետության նորացման անհաջողությունը թանզիմաթի դարաշրջանում,«նոր օսմանների» և երիտթուրքերի վայրագ ազգայնամոլությունը,և վերջին ութսուն տարում նորացման չորս փուլերի չափավոր հաջողությունները: Ուստի՝ Թուրքիային այսօր դեռևս չի կարելի համարել ժողովրդավարական պետություն, բայց առջևում սպասվում է նորացման հինգերորդ փուլը: Այս փուլում հաջողության հույսը Ս.Բաղդասարյանը կապում է ներկա նախագահ Ահմեդ Սեզերի և նրան շրջապատող երիտասարդ արևմտամետ քաղաքական գործիչների հետ: Մնզ մնում է հավատալ Թուրքիայում ժողովրդավարական նման ուժերի գոյությանը:

Ժողովածուն եզրափակում է Ռ.Սաֆրաստյանի «Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.)» արժեքավոր հոդվածը: Հեղինակը հայ օսմանագիտության և թուրքագիտության մեջ հայտնի հետազոտող է, և տարիների ընթացքում կուտակած փորձն ու հսկայական նյութերը հնարավորություն են տալիս կատարելու հասուն վերլուծություններ ժամանակակից աշխարհաքաղաքական շատ թեմաներով: Տվյալ հոդվածում Եվրասիայի և սեպտեմբերի 11-ից հետո Թուրքիայի վարած քաղաքականության մասին շրջանառության մեջ դրվող նյութերը նորույթ են և կարևոր կողմնորոշիչ դեր կարող են կատարել մեր կառավարության համար: Բերված նյութերը և հեղինակի եզրակացությունը ցույց են տալիս, որ թուրքական վտանգը սարերի հետևում չէ: Մնում է ցանկանալ,որ Ռ.Սաֆրաստյանն այս կարևոր բնագավառում իր ուսումնասիրությունները շարունակի ավելի մեծ եռանդով և ստանա մեր կառավարության աջակցությունը:

Ամփոփելով մեր խոսքը՝ մի անգամ ևս փաստենք, որ այս ժողովածուի հրատարակումով հայ թուրքագիտության պատմության մեջ բացվում է մի նոր էջ: Նշենք, որ նախընտրելի է հոդվածների հայերեն տարբերակը: Դրանով մեծ կլինի ընթերցողների շրջանակը, դրանք ավելի մատչելի կլինեն ուսանողության համար: Կարելի է միջոցների հայթայթման դեպքում հրատարակել ժողովածուի ռուսերեն կամ անգլերեն տարբերակները ևս:

Վ.ՂԼԵՋՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու